| **Մասնագիտության նկարագիրը** | |
|---|---|
| **Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը** | Մասնագիտությունը՝ «Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում»<br>Որակավորումը՝ «Ներկարար» |
| **I. Դերը** | Ներկարարն իրականացնում է արտաքին, ներքին պատերի, առաստաղների, մետաղական մասերի, մետաղական կոնստրուկցիաների, մետաղական կառուցվածքների, փայտե մասերի, փայտե դռների, փայտե պատուհանների, փայտե կոնստրուկցիաների, փայտե կառուցվածքների նախապատրաստական և ներկման աշխատանքներ (տարբեր կատեգորիայի՝ ըստ շահագործման բնութագրի):<br>Ներկարարն իրականացնում է նաև պաստառապատման նախապատրաստական աշխատանքներ և պաստառապատում: Ոչ մեծ և փոքրածավալ դեկորատիվ դետալների ամրացման համար նախապատրաստական աշխատանքների իրականացում և ամրացում:<br>Ներկարարը կարող է աշխատել տարբեր շինարարական, շինվերանորոգման կազմակերպություններում, ներկապատրաստման արտադրամասերում: |
| **II. Խնդիրների բնագավառները** | |
| **<u>Խնդիրների բնագավառ 1.</u> Ներկանյութի և գործիքների ընտրություն** | |
| **Աշխատանքային գործընթացը** | - ընտրում է ներկերը,<br>- ընտրում է գունային պիգմենտները,<br>- ընտրում է լուծիչները,<br>- ընտրում է ներկերի և/ կամ լուծիչների և/կամ գունային պիգմենտների չափաբաժինները,<br>- պատրաստում է ներկանյութը,<br>- ընտրում է անհրաժեշտ գործիքները: |
| **Կատարման չափանիշներ** | - ընտրված են ներկերը,<br>- ընտրված են գունային պիգմենտները,<br>- ընտրված են լուծիչները,<br>- ընտրված են ներկերի և/ կամ լուծիչների և/կամ գունային պիգմենտների չափաբաժինները,<br>- պատրաստված է ներկանյութը,<br>- ընտրված են անհրաժեշտ գործիքները: |

| | |
|---|---|
| **<u>Խնդիրների բնագավառ 2.</u> Ներքին և արտաքին պատերի նախապատրաստում ներկման Համար** | |
| **Աշխատանքային գործընթացը** | - մեկուսացնում է չներկվող մակերևույթները,<br>- մաքրում է հին ներկերը,<br>- մաքրում է մակերևույթները փոշուց և ավելորդություններից՝ անհրաժեշտ հարմարանքներով և գործիքներով,<br>- շաղախներով հարթեցնում է մակերևույթներ անհարթությունները,<br>- ծեփամածիկներով քսահարթում է մակերևույթները,<br>- հղկաթղթում է մակերևույթները,<br>- նախաներկում է մակերևույթները,<br>- շտկում է ի հայտ եկած թերությունները: |
| **Կատարման չափանիշներ** | - մեկուսացված են չներկվող մակերևույթները,<br>- մաքրված են հին ներկերը,<br>- մաքրված են մակերևույթները փոշուց և ավելորդություններից,<br>- շաղախներով հարթեցված են մակերևույթների անհարթությունները,<br>- ծեփամածիկներով քսահարթեցված են մակերևույթները,<br>-հղկաթղթված են մակերևույթները,<br>- նախաներկված են մակերևույթները,<br>-շտկված են ի հայտ եկած թերությունները: |
| **<u>Խնդիրների բնագավառ 3.</u> Մետաղյա** մակերևույթների **նախապատրաստում՝ ներկման համար** | |
| **Աշխատանքային գործընթացը** | - մաքրում է հին ներկերը,<br>- մաքրում է մակերևույթները յուղից, փոշուց և ավելորդություններից,<br>- քսահարթում է մակերևույթները մածիկներով,<br>- հղկաթղթում է մակերևույթները,<br>- մաքրում է մակերևույթները մետաղական խոզանակներով,<br>- մաքրում է մակերևույթները մեքենայացված եղանակով՝ էլեկտրական կամ պնևմատիկ հաղորդակ ունեցող խոզանակների միջոցով,<br>- մաքրում է մակերևույթները քիմիական նյութերով,<br>- մաքրում է մակերևույթները այրիչներով և բոցով,<br>- մաքրում է մակերևույթները ավազաշիթային սարքի օգնությամբ,<br>- նախաներկում է մակերևույթները,<br>- շտկում է ի հայտ եկած թերությունները: |
| **Կատարման չափանիշներ** | - մաքրված են հին ներկերը,<br>- մաքրված են մակերևույթները յուղից փոշուց և |

| | |
|---|---|
| | ավելորդություններից,<br>- քսահարթված են մակերևույթները մածիկներով,<br>- հղկաթղթված են մակերևույթները,<br>- մաքրված են մակերևույթները մետաղական խոզանակներով,<br>- մաքրված են մակերևույթները էլեկտրական կամ պնևմատիկ հաղորդակ ունեցող խոզանակների միջոցով, մեքենայացված եղանակով,<br>- մաքրված են մակերևույթները քիմիական նյութերով,<br>- մաքրված են մակերևույթները այրիչներով և բոցով,<br>- մաքրված են մակերևույթները ավազաշիթային սարքի օգնությամբ,<br>- նախաներկված են մակերևույթները,<br>- շտկված են ի հայտ եկած թերությունները: |
| **<u>Խնդիրների բնագավառ 4.</u> Փայտե մակերեսների նախապատրաստում՝ ներկման համար** | |
| **Աշխատանքային գործընթացը** | - մաքրում է հին ներկերը,<br>- քսահարթում է մակերևույթները մածիկներով,<br>- հղկաթղթում է մակերևույթները,<br>- մաքրում է մակերևույթները մեքենայացված եղանակով՝ էլեկտրական կամ պնևմատիկ հաղորդակ ունեցող հղկաթղթի միջոցով,<br>- մաքրում է մակերևույթները քիմիական նյութերով,<br>- նախաներկում է մակերևույթները,<br>- շտկում է ի հայտ եկած թերությունները: |
| **Կատարման չափանիշներ** | - մաքրված են հին ներկերը,<br>- քսահարթեցված են մակերևույթները մածիկներով,<br>- հղկաթղթված են մակերևույթները,<br>- մաքրված են մակերևույթները մեքենայացված եղանակով՝ էլեկտրական կամ պնևմատիկ հաղորդակ ունեցող բանվորական մասով հղկաթղթի միջոցով,<br>-մաքրված են մակերևույթները քիմիական նյութերով,<br>- նախաներկված են մակերևույթները,<br>- շտկված են ի հայտ եկած թերությունները: |
| **<u>Խնդիրների բնագավառ 5.</u> Ներքին և արտաքին** մակերևույթների **ներկում վրձիններով, գլանիկներով և ներկացրիչներով** | |
| **Աշխատանքային գործընթացը** | - ներքին և արտաքին մակերևույթների վրա վրձիններով գծում է գծերը,<br>- վրձիններով առանձնացնում է ներքին և արտաքին |

| | |
|---|---|
| | մակերևույթների անկյունները, չներկվող մակերևույթները, առաստաղները,<br>- վրձիններով եզրագծում, եզրաներկում է դեկորատիվ դետալները,<br>- համապատասխան չափի վրձիններով  ներկում է ներքին և արտաքին մակերևույթները,<br>- ներքին և արտաքին մակերևույթները ներկում է տարբեր չափի գլանիկներով,<br>-ներքին և արտաքին մակերևույթները ներկում է դեկորատիվ գլանիկներով,<br>-ներքին և արտաքին մակերևույթները ներկում է ներկացրիչներով: |
| **Կատարման չափանիշներ** | - գծված են գծերը վրձիններով՝ ներքին և արտաքին մակերևույթները վրա,<br>- վրձիններով առանձնացված են ներքին և արտաքին մակերևույթների անկյունները, չներկվող մակերեսները, առաստաղները,<br>- վրձիններով եզրագծված, եզրաներկված են  դեկորատիվ դետալները,<br>- ներկված են ներքին և արտաքին մակերևույթները՝ համապատասխան չափի վրձիններով,<br>- ներկված են ներքին և արտաքին մակերևույթները տարբեր չափի գլանիկներով,<br>- ներկված են ներքին և արտաքին մակերևույթները դեկորատիվ գլանիկներով,<br>- ներկված են ներքին և արտաքին մակերևույթները ներկացրիչներով: |
| **<u>Խնդիրների բնագավառ 6.</u>  Մետաղյա** մակերևույթների **ներկում վրձիններով, գլանիկներով և ներկացրիչներով** | |
| **Աշխատանքային գործընթացը** | - վրձիններով  առանձնացում է մետաղական մակերևույթների անկյունները, չներկվող մակերևույթները, գունային տարբեր երանգները,<br>- վրձիններով եզրագծում, եզրաներկում է  դեկորատիվ դետալները,<br>- համապատասխան  չափի վրձիններով ներկում է մետաղական մակերևույթները,<br>- մետաղական մակերևույթները ներկում է տարբեր չափի գլանիկներով,<br>- մետաղական մակերևույթները ներկում է ներկացրիչներով: |

| | |
|---|---|
| **Կատարման չափանիշներ** | - վրձիններով առանձնացված են մետաղական մակերևույթների անկյունները, չներկվող մակերևույթները՝ գունային տարբեր երանգներով,<br>- վրձիններով եզրագծված, եզրաներկված են դեկորատիվ դետալները,<br>-ներկված են մետաղական մակերևույթները համապատասխան չափի վրձիններով,<br>-ներկված են մետաղական մակերևույթները տարբեր չափի գլանիկներով,<br>- ներկված են մետաղական մակերևույթները ներկացրիչներով: |
| <u>Խնդիրների բնագավառ 7.</u> **Փայտե մակերևույթների ներկում վրձիններով, գլանիկներով և ներկացրիչներով** | |
| **Աշխատանքային գործընթացը** | - վրձիններով առանձնացում է փայտե մակերևույթների անկյունները, չներկվող մակերևույթները՝ գունային տարբեր երանգներով,<br>-դեկորատիվ դետալները եզրագծում, եզրաներկում է վրձիններով,<br>- փայտե մակերևույթները ներկում է համապատասխան չափի վրձիններով,<br>- փայտե մակերևույթները ներկում է տարբեր չափի գլանիկներով,<br>- փայտե մակերևույթները ներկում է ներկացրիչներով: |
| **Կատարման չափանիշներ** | - վրձիններով առանձնացված են փայտե մակերևույթների անկյունները, չներկվող մակերևույթները՝ գունային տարբեր երանգներով,<br>- վրձիններով եզրագծված, եզրաներկված են դեկորատիվ դետալները,<br>- փայտե մակերևույթները ներկված են համապատասխան չափի վրձիններով.<br>- փայտե մակերևույթները ներկված են տարբեր չափի գլանիկներով,<br>- փայտե մակերևույթները ներկված են ներկացրիչներով: |
| **<u>Խնդիրների բնագավառ 8</u>. Պաստառապատում** | |
| **Աշխատանքային գործընթացը** | - նախապատրաստում է պաստառները, ըստ պահանջվող չափերի,<br>- կտրում է պաստառները, ըստ պահանջվող չափի,<br>- պաստառապատվող մակերևույթը սոսնձապատում է, ըստ պահանջվող տեխնոլոգիայի,<br>- պաստառը սոսնձապատում է, ըստ պահանջվող տեխնոլոգիայի, |

| | |
|---|---|
| | - ըստ պահանջվող տեխնոլոգիայի, ինքնակպչուն պաստառների վրայից հեռացնում է պաշտպանիչ մասը,<br>- մակերևույթները պաստառապատում է՝ ըստ պահանջվող տեխնոլոգիայի,<br>- առաստաղի մասում ուղղում է պաստառները մեկ գծով՝ ըստ նախագծային չափի<br>- չպաստառապատվող մասերից կտրում և հեռացնում է պաստառները,<br>- ուղղում է եզրերը և շտկում թերությունները,<br>- մաքրում է կեղտաբծերը, շտկում է ընդհանուր թերությունները : |
| **Կատարման չափանիշները** | -նախապատրաստված են պաստառները, ըստ պահանջվող չափերի,<br>-կտրված են պաստառները, ըստ պահանջվող չափի,<br>-սոսնձապատված է պաստառապատվող մակերևույթը, ըստ պահանջվող տեխնոլոգիայի,<br>-սոսնձապատված է պաստառը, ըստ պահանջվող տեխնոլոգիայի,<br>- հեռացված է ինքնակպչուն պաստառների վրայից պաշտպանիչ մասը, ըստ տեխնոլոգիայի,<br>- ուղղված են պաստառները առաստաղի մասում մեկ գծով, ըստ նախագծային չափի,<br>-կտրված և հեռացված են պաստառները չպաստառապատվող մասերից,<br>- ուղղված են եզրերը, շտկված են թերությունները,<br>- մաքրված են կեղտաբծերը, շտկված են ընդհանուր թերությունները: |
| **Խնդիրների բնագավառ 9**. **Պարզ և փոքրածավալ դեկորատիվ դետալների ամրացում** | |
| **Աշխատանքային գործընթացը** | - ընտրում է դեկորատիվ դետալների ամրացման համար անհրաժեշտ գործիքներ,<br>- նախապատրաստում է դեկորատիվ դետալները, ըստ պահանջվող չափերի, կտրում է գծային դետալները,<br>- կատարում է տեղանշում դեկորատիվ դետալների ամրացման համար,<br>- կատարում է խածատում հիմնատակի և դետալների վրա՝ դեկորատիվ դետալների ամրացման համար,<br>- պատրաստում է դեկորատիվ դետալների ամրացման համար գիպսային շաղախ և սոսինձներ, |

| | |
|---|---|
| | - ամրացնում է դեկորատիվ դետալները, ըստ պահանջվող տեխնոլոգիայի: |
| **Կատարման չափանիշները** | - ընտրված են դեկորատիվ դետալների ամրացման համար անհրաժեշտ գործիքները,<br>- նախապատրաստված են դեկորատիվ դետալները, ըստ պահանջվող չափերի կտրված են գծային դետալները,<br>- կատարված է տեղանշում  դեկորատիվ դետալների ամրացման համար,<br>- կատարված է խածատում  հիմնատակի և դետալների վրա՝ դեկորատիվ դետալների ամրացման համար,<br>-պատրաստված են դեկորատիվ դետալների ամրացման համար գիպսային շաղախ և սոսինձներ,<br>- ամրացված են դեկորատիվ դետալները, ըստ պահանջվող տեխնոլոգիայի: |
| **<u>Խնդիրների բնագավառ 10</u>.   Աշխատանքների ավարտից հետո առաջացած թերությունների վերացում, գործիքների մաքրում, չավարտված՝ ներկերի, լուծիչների, գունային պիգմենտների պահպանում** | |
| **Աշխատանքային գործընթացը** | - ներկարարական աշխատանքներից հետո  շտկում  է բացթողումները և թերությունները,<br>- ներկարարական աշխատանքներում օգտագործվող գործիքները մաքրվում  են լուծիչներով և քիմիական այլ նյութերով,<br>- գործիքները պահպանվում են համապատասխան տեղերում կամ հանձնվում են պահպանության,<br>- հերմետիկ փակվում են չվերջացած  ներկերը, լուծիչները և գունային պիգմենտները, կատարում են համապատասխան նշումներ և պահպանում կամ հանձնում պահպանության: |
| **Կատարման չափանիշները** | -շտկված են բացթողումներն ու թերությունները, ներկարարական աշխատանքներից հետո,<br>-մաքրված են ներկարարական աշխատանքներում օգտագործվող գործիքները՝ լուծիչներով և քիմիական այլ նյութերով,<br>-պահված են գործիքները համապատասխան տեղերում կամ հանձնված են պահպանության,<br>-հերմետիկ փակված են չավարտված ներկերը, լուծիչներն ու գունային պիգմենտները, կատարված են համապատասխան նշումներ և պահպանված կամ հանձնված պահպանության: |

| | |
|---|---|
| **III.Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/** | Պատասխանատու է աշխատանքների ճիշտ պլանավորման, որակով կատարման, անվտանգության կանոնների պահպանման համար: |
| **IV. Լեզուները** | Հայերեն՝ լավ<br>Օտար լեզու՝ բավարար |
| **V. Համակարգիչը** | - MS Word՝ բավարար<br>- MS Excel՝ բավարար<br>- MS PowerPoint՝ բավարար<br>- Internet Explorer՝ բավարար |
| **VI. Գիտելիքները** | - ներկարարական աշխատանքներում օգտագործվող շինարարական նյութերի իմացություն.<br>- չափման գործիքների իմացություն և կիրառում.<br>- ներկարարական աշխատանքների տեխնոլոգիական քարտերի ընթերցում,<br>- անվտանգության կանոնների և առաջին բուժօգնության իմացություն: |
| **VII. Կարողությունները և հմտությունները** | - աշխատանքային գծագրին համապատասխան նյութերի և սարքավորումների նախապատրաստման կարողություն.<br>- շենքերի պատերի և ներկվող այլ մակերևույթները մաքրելու և խածատելու կարողություն.<br>- մակերևույթները մածիկով հավասարեցնելու, հարթեցնելու կարողություն.<br>- ներկեր, լաքեր, շաղախներ, մածիկներ, պաստառներ, նախաներկեր ընտրելու և պատրաստելու կարողություն.<br>- մածիկապատված մակերևույթները նախաներկման նախապատրաստելու կարողություն.<br>- մակերևույթների նախաներկման կարողություն.<br>- նախապատրաստական աշխատանքների ավարտից հետո գլանիկով, վրձնով կամ ներկացրիչով մակերևույթների ներկման կարողություն.<br>- պաստառապատման և թաղանթների սոսնձման համար մակերևույթների նախապատրաստման կարողություն.<br>- պաստառների և թաղանթների ընտրություն և դրանք մակերևույթներին սոսնձելու կարողություն.<br>- մակերևույթների մաքրման, նախապատրաստման, ներկման |

| | |
|---|---|
| | համար օգտագործվող գործիքների,  սարքերի և սարքավորումների կարգաբերման և օգտագործման կարողություն.<br>- պարզ և փոքրածավալ դեկորատիվ դետալների ըստ պահանջվող չափերի նախապատրաստման և ամրացման կարողություն: |
| **VIII. Անձի որակական հատկանիշներ** | Խմբային աշխատանքում հարմարվողականություն, ճշտապահություն, անվտանգ աշխատանքի կարևորության գիտակցում, գիտելիքների և կարողությունների անընդհատ կատարելագործում, պատասխանատվության զգացում, հարգալից վերաբերմունք ղեկավարի և գործընկերների նկատմամբ: |